

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

21.06.2024



Առողջապահական համակարգի սիրելի՛ աշխատակիցներ

Ընդունե՛ք ջերմ ու երախտագիտությամբ լի շնորհավորանքս այսօր մեր հանրապետությունում նշվող Բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Ձեր մասնագիտությունը հանրության մեջ ամենակարևորներից է, պատվաբեր ու հարգված: Դրա ակունքը ձեր հմտություններն են, մարդասիրությունը, անձնուրացությունը և նվիրվածությունը սիրելի աշխատանքին:

Ամեն օր պատասխանատվություն եք կրում մարդկանց կյանքի և առողջության համար, օգնության հասնում ամենադժվար պահերին, երբեմն անում անհնարին՝ անձնագոհություն ու կարեկցանք ցուցաբերելով ուրիշի ցավի հանդեպ:

Ձեր բարդ աշխատանքը պահանջում է ոչ միայն խոր գիտելիքներ, մասնագիտական բարձր պատրաստականություն ու հմտություններ, այլև բարոյական հատուկ որակներ, բարություն և սպրումակցման ունակություն: Իսկ համակարգի՝ բազմամյա փորձ ու անուն վաստակած աշխատակիցների փորձը ուսանելի ճանապարհի անցնելու օրինակ է երիտասարդ մասնագետների համար:

Մեր մարզի բոլոր բնակիչների անունից մասնագիտական տոնի առիթով շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ սիրելի՛ բուժաշխատողներ՝ բոլորիս առողջության մասին հոգ տանելու համար: Ձեզ ու ձեր ընտանիքներին մաղթում եմ բարօրություն, երջանկություն, միմիայն խաղաղ պայմաններում բնականոն գործունեություն:

Թո՛ղ մեր երախտագիտությունն ու հարգանքը ձեր աշխատանքի մշտական գնահատանքի դրսևորումը լինեն: